

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ
Մատենադարանի տնօրեն Ա. Խաչմալյան

12 հունիսի, 2024 թ.



ԱՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔԸ

Ձեռագրերի Ամիր Մեհդիի «Էթնոնիմների իմաստային զարգացումը պարսից դասական գրականության մեջ (IX-XVI դարեր)» թեմայով ժ.02.06 – «Ասիայի հին և նոր լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող առենախոսության վերաբերյալ

Առենախոսությունը քննարկվել է Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ Մատենադարանի Արևելագիտության բաժնի 2024 թվականի հունիսի 11-ի նիստում, որին մասնակցել են բաժնի վարիչ պ.գ.դ. պրոֆեսոր Ք. Կոստիկյանը, ավագ գիտաշխատողներ բ.գ.թ. Հ. Կիրակոսյանը, բ.գ.թ. Հ. Գևորգյանը, պ.գ.թ. Վ Մակարյանը, գիտաշխատողներ պ.գ.թ. Գ. Երանյանը, Վերա Սահակյանը և կրտսեր գիտաշխատող Է. Ղազարյանը:

Առենախոսության ուսումնասիրության առարկան են նոր պարսկերենով ավանդված ցեղանունները իրենց զարգացման և փոխակերպումների մեջ, որը արդիական է Միջին Արևելքի տարբեր ժողովուրդներին ու էթնիկ խմբերին վերաբերող ցեղանունների պատմության լուսաբանման տեսանկյունից:

Թեման կարևորվում է նրանով, որ առաջին անգամ համապարփակ կերպով ուսումնասիրվում է պարսից դասական գրականության կամ նոր պարսկերենով (IX-XVI դարեր) ավանդված գրականության մեջ վկայված էթնոնիմների շերտը՝ ենթարկելով այն ստուգաբանական, իմաստաբանական և լեզվաբանական քննության: Աշխատանքը արդիական է էթնոնիմների վկայվածության պատմությունը գիտական շրջանառության մեջ դնելու, իմաստային զարգացումների միտումները

պարզաբանելու և ծագումնաբանական հարցերի ուսումնասիրման համար առարկայական նյութ տրամադրելու առումով:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից և երկու գլուխներից: Գլուխներից առաջինում բավականին հարուստ նյութի՝ շուրջ 200 գրական և պատմական ստեղծագործությունների հիման վրա քննվել են յուրաքանչյուր ցեղանվան հնագույն տարբերակները, դրանց փոխակերպումները և իմաստային զարգացումները: Հեղինակի կողմից ատենախոսության առաջին գլխում դիտարկվել է 72 ցեղանուն, որից հետո երկրորդ գլխում անց է կացվել այդ ցեղանունների լեզվական ուսումնասիրություն:

Ուշագրավ են աշխատանքի հիման վրա ատենախոսի կատարած եզրահանգումները ցեղանունների իմաստափոխության ձևերի վերաբերյալ:

Աշխատանքը կառուցվածքային և բովանդակային տեսանկյունից մոտ է Հայկազ Գևորգյանի «Ցեղանունները հայ պատմագրության մեջ (V-XII դդ.)» ատենախոսությանը և տրամաբանորեն շաղկապված նրան, քանի որ դիտարկում է ցեղանունների իմաստային զարգացումները IX-XVI դարերի պարսից դասական գրականության մեջ: Այդուհանդերձ, այն լիովին ինքնուրույն աշխատանք է, կատարված բոլորովին այլ աղբյուրների հիմքի վրա և բովանդակում է գիտական նորոյթ՝ հանդիսանալով արժեքավոր հետազոտություն ցեղանվանագիտության ոլորտում:

Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական դրույթները, իսկ ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հաստատված գիտական հրատարակությունների համար ընդունելի պարբերականներում հեղինակի հրատարակած հոդվածներում ներկայացված են ատենախոսության հիմնական արդյունքները:

Աշխատանքի վերաբերյալ ունենք որոշ դիտողություններ և նկատառումներ.

Ա. Տառադարձության համակարգի մասին տեղեկությունները թերի են. հեղինակը բավարարվել է նշելով, որ պարսկերեն գրական երկերի ու

բանաստեղծների անունները տառադարձել է լատինատառ, սակայն չի նշել ո՞ր համակարգով:

Բ. Որոշ ցեղանունների իմաստային նշանակությունները նշելիս ճիշտ կլիներ, որ հեղինակը դրանք հիմնավորեր սկզբնաղբյուրները հղելով: Մասնավորապես, էջ 16-ում ատենախոսը նշում է, որ պարսկերենում, ենթադրվում է ժամանակակից պարսկերենում, abkhāz, abkhāzi անունը «ստորացուցիչ նշանակություն ունի», սակայն չի ներկայացնում սկզբնաղբյուրը: Առաջարկում ենք հեղինակին որոշակիացնել գրավոր կամ բանավոր աղբյուրը:

Գ. Ատենախոսության երկրորդ գլուխը վերաբերում է ցեղանունների բառակազմությանը և իմաստաբանությանը՝ ամփոփված 11 էջում: Աղբյուրագիտական մեծ նյութը, որը ներկայացված է աշխատանքի առաջին գլխում ենթադրում էր ավելի լայն և ընդգրկուն քննություն այս գլխում, որը հեղինակը չի իրականացրել: Ընդ որում, ցանկալի կլիներ այս գլխում ցույց տալ իմաստային զարգացումները նաև բառաբարդումների մեջ:

Դ. Բառակազմական վերլուծության մեջ չեն դիտարկվում հարադրական կազմություն ունեցող ցեղանունները, մինչդեռ այդպիսին է ատենախոսի ներկայացրած Banī Isrā'īl ցեղանունը:

Ե. Էջ 20-ում ատենախոսը «Բորզու-նամեն» համարում է 6-րդ դարի ստեղծագործություն: Մինչդեռ այս ստեղծագործության հեղինակ է համարվում Ղազնևյան արքունիքի բանաստեղծ Աթա ի Ռազին, իսկ ստեղծագործության լեզուն 11-րդ դարի պարսկերենի լեզվական առանձնահատկություններն ունի:

Զ. Ատենախոսության մեջ առկա են բազում լեզվաոճական անհարթություններ և վրիպակներ:

Այս դիտողությունները, սակայն, չեն սուվերում ատենախոսության արժանիքները: Ատենախոսությունը և սեղմագիրը պատրաստված են ներկայացվող պահանջներին համապատասխան, իսկ հեղինակի կողմից հրատարակված


հողվածներում լիարժեքորեն արտացոլվում են ատենախոսության հիմնական դրույթները:

Կարծում ենք կատարված է արժեքավոր հետազոտություն ցեղանվանագիտության ոլորտում, որն ունի գիտական պատշաճ շարադրանք, տրամաբանված եզրահանգումներ և կուռ կառուցվածք:

Ատենախոսության թեման ու բովանդակությունը համապատասխանում են ընտրված մասնագիտությանը:

Այսպիսով, Ձեյղամի Ամիր Մեհդիի «Էթնոնիմների իմաստային զարգացումը պարսից դասական գրականության մեջ (IX-XVI դարեր)» թեմայով ատենախոսությունը արդիական, գիտական նորույթ պարունակող, տեսական և գործնական նշանակություն ունեցող ինքնուրույն ուսումնասիրություն է: Այն լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով սահմանված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ժ.02.06 – «Ասիայի հին և նոր լեզուներ» մասնագիտությամբ իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Մերոպ Մաշտոցի անվան Մատենադարանի

Արևելագիտության բաժնի վարիչ, պ.գ.դ. պրոֆեսոր  Բ. Կոստիկյան

Բ. Կոստիկյանի ստորագրությունը հաստատում եմ

Մերոպ Մաշտոցի անվան Մատենադարանի

գիտական քարտուղար, պ.գ.թ.



Վ. Թորոսյան